Կոնֆիդենցիալ

ՀԱՎԵԼՎԱԾ № 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ Խորհրդի որոշմամբ

2019թ. դեկտեմբերի «27» թիվ 14 արձանագրություն

ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ Խորհրդի տվյալ նիստի նախագահող

_____ Ի. Ի. Շայմարդանով

«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ-Ի ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԱԿԱԶԴՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(Նոր խմբագրություն)

Երևան

2019

ԲՈՎԱՆԱԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3
ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 3
ԳԼՈՒԽ 3. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ 4
ԳԼՈՒԽ 4. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ 5
ԳԼՈՒԽ 5. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ 6
ԳԼՈՒԽ 6. ԿՈՆՏՐԱԳԵՆՏՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՍՏՈՒԳՈՒՄ 8
ԳԼՈՒԽ 7. ՆՎԵՐՆԵՐ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ 8
ԳԼՈՒԽ 8: ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ 9
ԳԼՈՒԽ 9. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԵՏԵՎԵԼՈՒ ԲԱՆԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 9
ԳԼՈՒԽ 10. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՉՀԵՏԵՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 10
ԳԼՈՒԽ 11. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ 10

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի կոռուպցիայի հակազդման քաղաքականությունը (այսուհետ՝ «Քաղաքականություն») սահմանում է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում (այսուհետ՝ «Բանկ») կոռուպցիայի կանխարգելման ու վերացման հիմնական սկզբունքներն ու մոտեցումները, որոնք ուղղված են կոռուպցիայի պրոֆիլակտիկային ու կանխարգելմանը, ինչպես նաև Բանկի աշխատակիցների ու ղեկավարության (այսուհետ՝ «աշխատակիցներ») կողմից կոռուպցիայի հակազդմանը վերաբերող ՀՀ օրենսդրական նորմերի պահպանմանը Բանկում:

2. Սույն Քաղաքականությունը մշակված է՝ Կոռուպցիայի դեմ միջազգային կոնվենցիաների, ՀՀ գործող օրենսդրության, ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի 16.04.2013թ. թիվ 102-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ի, Բանկի կանոնադրության, Բանկի էթիկայի կանոնագրքի և Բանկի այլ ներքին իրավական ակտերի (այսուհետ՝ ՆԻԱ), ինչպես նաև ՎՏԲ Բանկ Խմբի ներքին իրավական ակտերի հիման վրա (ՀՀ օրենսդրությանը չհակասող մասով):

3. Սույն Քաղաքականությունն ուղղված է՝ Բանկի աշխատակիցների կողմից Կոռուպցիայի հակազդեցության վերաբերյալ միջազգային և օրենսդրական այլ նորմերի պահպանմանն ու ամրապնդմանը, թափանցիկ և արդար բիզնեսի էթիկայի բարձր չափանիշների ներդրմանը, կորպորատիվ մշակույթի կատարելագործմանը, կորպորատիվ կառավարման լավագույն պրակտիկայի կիրառմանը և Բանկի ամբասիր գործարար համբավի պահպանմանը:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. Սույն Քաղաքականությունում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **Լիազորությունների չարաշահում՝** Բանկի աշխատակիցների կողմից՝ Բանկի շահերին հակառակ, իրենց կարգադրիչ կամ այլ լիազորությունները՝ իրենց կամ ուրիշ անձանց օգտին օգտագործելու, կամ առավելություններ ձեռք բերելու, կամ այլ անձանց վնաս պատճառելու նպատակով օգտագործելը՝ եթե դա էական վնաս է պատճառել անձանց, կազմակերպությունների կամ պետության իրավունքներին ու օրինական շահերին:

2) **Առևտրային կաշառք՝** Բանկի աշխատակցին՝ վերջինիս զբաղեցրած դիրքով պայմանավորված, դրամ, արժեթղթեր, որևէ այլ գույք ապօրինաբար փոխանցելը, կամ գույքային բնույթի ծառայություններ մատուցելը՝ կաշառք տվողի օգտին գործողություններ կատարելու (չկատարելու) համար: Բանկի աշխատակցի կողմից դրամ, արժեթղթեր կամ

այլ գույք ընդունելը կաշառք տվողի օգտին գործողություններ կատարելու (չկատարելու) համար:

3) **Կոռուպցիոն գործոններ՝** գործոններ, որոնք ստեղծում են կոռուպցիայի առաջացման պայմաններ, մասնավորապես, բիզնես գործընթացներում և/կամ Բանկի ՆԻԱ կարգերում այնպիսի պայմանների առկայություն, որոնք Բանկի աշխատակիցների համար սահմանում են դատողությունների չհիմնավորված լայն շրջանակի, կամ ընդհանուր կանոններից բացառությունների կիրառման չհիմնավորված հնարավորություններ, ինչպես նաև հաճախորդների, կոնտրագենտների, գործընկերների և Բանկի աշխատակիցների առջև դնում են անորոշ, դժվար իրագործելի և/կամ ծանրացուցիչ պահանջներ:

4) **Կոռուպցիոն գործողություններ (այսուհետ նաև՝ «Կոռուպցիա»)՝** կաշառք տալը կամ ընդունելը, կաշառք տալու կամ ընդունելի միջնորդությունը, ծառայողական դիրքի կամ լիազորությունների չարաշահումը, առևտրային կաշառքը, Բանկի աշխատակցի կողմից իր դիրքի ապօրինի օգտագործումը՝ իր կամ այլ անձանց համար դրամ, արժեքավոր իր, այլ գույք, ծառայություններ կամ որևէ իրավունքի ձևով օգուտ ստանալու համար, կամ օգուտների կամ իրավունքների ապօրինի տրամադրումը Բանկի աշխատակցին Բանկի հաճախորդների, կոնտրագենտների կամ գործընկերների կողմից:

5) Պատասխանատու ստորաբաժանումներ – Բանկի կառուցվածքային ստորաբաժանումներ, որոնց ֆունկցիոնալ պարտականությունները ներառում են կոռուպցիայի հակազդման ուղղությամբ միջոցառումների իրականացումը իրենց լիազորությունների շրջանակներում, համաձայն սույն Քաղաքականության և Բանկի այն ներքին իրավական ակտերի:

6) **Կոռուպցիայի հակազդեցություն՝** Կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված գործողություններ, այդ թվում՝ կոռուպցիայի պատճառների հայտնաբերում և հետագայում դրանց վերացում (կոռուպցիայի պրոֆիլակտիկա), կոռուպցիոն իրավախախտումների հայտնաբերում, կանխարգելում, բացահայտում և խափանում (կոռուպցիայի դեմ պայքար), ինչպես նաև կոռուպցիոն իրավախախտումների հետևանքների վերացումը և/կամ դրանց նվազագույնի հասցնելը:

ԳԼՈՒԽ 3. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

5. Սույն Քաղաքականությունն արտացոլում է Բանկի և Բանկի ղեկավարության հակվածությունը՝ բաց և ազնիվ բիզնես վարելու բարձր էթիկայի ստանդարտեների պահպանմանը, կորպորատիվ մշակույթի կատարելագործման նպատակով, կորպորատիվ կառավարման լավագույն փորձին հետևելու և Բանկի անթերի գործարար համբավի պահպանման նպատակով:

6. Կոռուպցիայի հակազդեցության նպատակներն են՝

1) Բանկի և նրա աշխատակիցների կողմից կոռուպցիոն գործունեության մեջ ներգրավվելու ռիսկի նվազեցում,

2) Բանկի բաժնետերերի, ներդրողների, կոնտրագենտների, աշխատակիցների և երրորդ անձանց շրջանում Բանկի հակակոռուպցիոն քաղաքականության և դրա ցանկացած դրսևորումների անթույլատրելիության միասնական ընկալում,

3) Կոռուպցիոն գործունեության նախազգուշացում և նման գործունեության համար պատասխանատվության ապահովում,

4) Ֆինանսական շուկայում Բանկի հակակոռուպցիոն գործարար համբավի ապահովում և պահպանում:

7. Կոռուպցիայի հակազդեցության սկզբունքներն են.

1) ցանկացած ձևի և դրսևորման կոռուպցիայի անընդունելիություն,

2) գործարար հարաբերությունների ռիսկի հնարավորինս նվազեցում այնպիսի կոնտրագենտների հետ, որոնք, կարող են, ներգրավված լինել կոռուպցիոն գործողությունների մեջ, կամ հանդուրժողական վերաբերմունք են ցուցաբերում նման երևույթների նկատմամբ,

3) Բանկի գործունեության ընթացքում կոռուպցիայի կանխարգելման և Տնօրինության կողմից հաստատված ««ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում շահերի բախման կանխարգելման և կարգավորման մասին կարգի» համաձայն շահերի բախման կանխարգելաման ուղղությամբ միջոցների կիրառմանը նախապատվություն տալը,

4) կոռուպցիայի կանխարգելման համար ներդրված համապատասխան ներքին ընթացակարգերի ողջամտության և արդյունավետության մոնիթորինգ, դրանց կիրառման վերահսկողություն և շարունակական կատարելագործում,

5) կոռուպցիայի հակազդման օրինականություն,

6) պատասխանատվություն կոռուպցիոն գործողությունների համար,

7) Բանկի պաշտոնական կայքում սույն Քաղաքականության հասանելիությունը:

ԳԼՈՒԽ 4. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ

8. Բանկն ապահովում է կոռուպցիայի կանխարգելումը սույն Քաղաքականությամբ և Բանկի այլ ներքին իրավական ակտերով նախատեսված միջոցառումների իրականացման միջոցով:

9. Բանկն ապահովում է վարքի կանոնագրքերի և/կամ ստանդարտների առկայությունը և կիրառումը, որոնք նախատեսում են Բանկի աշխատակիցների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների իրավական, բարեխիղճ և պատշաճ կատարումը:

10. Բանկն ապահովում է գնումների պատշաճ համակարգի գործունեություն, որը հիմնված է թափանցիկության, մրցակցության և որոշումների կայացման օբյեկտիվ չափանիշների վրա և արդյունավետ է կոռուպցիայի կանխարգելման տեսանկյունից: Կոնտրագենտների հետ կնքվող պայմանագրերում ներառվում են հակակոռուպցիոն դրույթներ:

11. Պատասխանատու ստորաբաժանումների կողմից իրականացվում են կոռուպցիայի կանխարգելման հետևյալ միջոցառումները՝

1) գնումների գործունեության հակակոռուպցիոն վերահսկողություն;

2) մշակվող ՆԻԱի և այլ կարգադրական փաստաթղթերի հակակոռուպցիոն փորձաքննություն, ներքին բիզնես գործընթացներ և ընթացակարգեր սահմանելու, ինչպես նաև այդ բիզնես գործընթացները և ընթացակարգերը փոփոխելու դեպքում;

3) ՆԻԱ-ի նախագծերի գնահատման արդյունքում ՆԻԱ համապատասխան նախագծերում փոփոխություններ անելու անհրաժեշտության մասին փորձագիտական եզրակացության տրամադրում՝ հայտնաբերված ռիսկերը նվազագույնի հասցնելու նպատակով;

4) կիրառվող միջազգային հակակոռուպցիոն իրավական նորմերի, ՀՀ հակակոռուպցիոն օրենսդրության և դրանցում արվող փոփոխությունների մոնիթորինգ:

5) ֆինանսական ոլորտում կոռուպցիոն միտումների, ինչպես նաև կոռուպցիոն իրավախախտումների պայմանների վերլուծություն, որոնց արդյունքների հիման վրա մշակվում են կոռուպցիայի առաջացման հնարավորությունների կանխարգելման միջոցներ:

ԳԼՈՒԽ 5. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

12. Կոռուպցիայի կանխարգելման և կոռուպցիոն ռիսկերի կառավարման նպատակով Բանկի Պատասխանատու ստորաբաժանումների կողմից իրականացնում են հետևյալ միջոցառումները՝

1) Բանկի ՆԻԱ և բիզնես գործընթացների, ինչպես նաև ներքին իրավական ակտերի նախագծերի գնահատում՝ դրանցում կոռուպցիոն գործոնների առկայության մասով:

Գործող ՆԻԱ և բիզնես գործընթացների գնահատումն իրականացվում է պարբերաբար՝ Պատասխանատու ստորաբաժանումների կողմից իրականացվող ստուգումների շրջանակներում՝ Բանկի ՆԻԱ սահմանված կարգով և ժամկետներում: ՆԻԱ նախագծերի փորձաքննությունն իրականացվում է համապատասխան ՆԻԱ հաստատումից առաջ՝ Բանկի Պատասխանատու ստորաբաժանումների կողմից ՆԻԱ նախագծի համաձայնեցման փուլում:

2) Բանկի ՆԻԱ հակակոռուպցիոն փորձաքննության հիման վրա, գնահատում է հայտնաբերված ռիսկերը՝ Բանկի Տնօրինության կողմից հաստատված ««ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ համապատասխանության ռիսկի կառավարման մասին կարգի» պահանջների համաձայն,

3) կոռուպցիոն ռիսկերի հայտնաբերման դեպքում հայտնաբերված ռիսկերը նվազագույնի հասցնելու ընթացակարգերի մշակում և ներդնում,

4) Բանկի աշխատակիցների կողմից սույն Քաղաքականության սկզբունքների պահպանման ստուգում, նշված ստուգումների արդյունքներով հաշվետվությունների կազմում և ներկայացնում Բանկի լիազոր մարմիններին,

5) հակակոռուպցիոն մոնիթորինգ, որը ներառում է հակակոռուպցիոն փորձաքննության արդյունքների ամփոփում, հավաքագրում և վերլուծություն, հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման մոնիթորինգ, կոռուպցիայի վերաբերյալ փաստերի վիճակագրության հավաքում, կոռուպցիոնածին գործոնների գնահատում և կանխատեսում,

6) կոռուպցիայի հակազդեցության ոլորտում ՆԻԱ մշակում, համապատասխան ոլորտի ՀՀ օրենսդրության փոփոխությունների դեպքում՝ այդ ՆԻԱ արդիականացման նախաձեռնում,

7) Բանկում հակակոռուպցիոն կորպորատիվ գիտակցության և մշակույթի կազմավորմանն ուղղված միջոցառումներ:

13. Կոռուպցիոն ռիսկերը նվազագույնի հասցնելու ընթացակարգերի իրականացման վերահսկողությունն իրականացվում է Բանկի գործադիր մարմինների կողմից:

14. Բանկի հակակոռուպցիոն Քաղաքականության արդյունավետությունը գնահատվում է Բանկի խորհրդի կողմից:

ԳԼՈՒԽ 6. ԿՈՆՏՐԱԳԵՆՏՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՍՏՈՒԳՈՒՄ

15. Բանկին և նրա աշխատակիցներին արգելվում է կոնտրագենտներին կամ այլ անձանց ներգրավել կամ օգտագործել ՀՀ օրենսդրական նորմերին և/կամ սույն Քաղաքականության սկզբունքներին ու պահանջներին հակասող գործունեություն իրականացնելու համար:

16. Բանկն իրականացնում է կոնտրագենտների և այլ անձանց ստուգման ընթացակարգեր Բանկի կողմից կոռուպցիայի կանխարգելման և կոռուպցիոն գործունեության մեջ Բանկի ներգրավման ռիսկերի բացահայտման համար: Բանկն իրավասու է, նշված ընթացակարգերն իրականացնելու նպատակով, իր կոնտրագենտներից պահանջել իրենց կառուցվածքի ամբողջական բացահայտում, ընդհուպ մինչև իրական շահառուների բացահայտում:

ԳԼՈՒԽ 7. ՆՎԵՐՆԵՐ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

17. Նվերները և ներկայացուցչական ծախսերը, որոնք կարող են հանձնվել այլ անձանց կամ կազմակերպություններին Բանկի անունից իր աշխատակիցների միջոցով, կամ նրանք, որոնք Բանկի աշխատակիցները կարող են ստանալ իրենց պաշտոնական պարտականությունների առնչությամբ այլ անձանցից կամ կազմակերպություններից, պետք է համապատասխանեն Բանկի Էթիկայի կանոնագրքին և չպետք է պայմանավորված լինեն կոռուպցիոն մտադրություններով:

18. Բանկի աշխատակցի կողմից՝ ղեկավարի և/կամ էթիկային հարցերով Բանկի պատասխանատու աշխատակցի համաձայնեցմամաբ, որպես նվեր վերջինիս լիազորությունների շրջանակներում արդեն իսկ կատարված որոշակի գործողություն կատարելու (անգործության) համար գույք, գույքային իրավունք կամ այլ գույքային բնույթի առավելություն ստանալը, որի արժեքը չի գերազանցում Բանկի Էթիկայի կանոնագրքով սահմանված չափը, չի հանդիսանում սույն Քաղաքականության խախտում:

19. Բանկը խուսափում է 3-րդ անձանց (Բանկի գործընկերների ներկայացուցիչների) և նրանց մտերիմ բարեկամների փոխարեն, ներառյալ՝ քաղծառայող հանդիսացող, ցանկացած սույն Քաղաքականության չափանիշներին չհամապատասխանող ծախսերի իրականացումից (եթե հակառակը ուղղակիորեն պայմանավորված չէ կամ նախատեսված չէ պայմանագրային հարաբերությունների բնույթով):

ԳԼՈՒԽ 8: ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

20. Բանկում կանոնավոր կերպով (համաձայն Բանկի ՆԻԱ պահանջների) իրականացվում է ֆինանսատնտեսական գործունեության ներքին և արտաքին աուդիտ, վերահսկվում է հաշվապահական հաշվետվություններում տվյալների ամբողջական և ճշգրիտ արտացոլումը՝ ՀՀ օրենսդրության և Բանկի ՆԻԱ պահանջների, այդ թվում սույն Քաղաքականությամբ սահմանված սկզբունքների և պահանջների համաձայն:

21. Ներքին վերահսկողության ընթացակարգերի շրջանակներում Բանկում իրականացվում է հիմնական բիզնես գործընթացների, ներառյալ իրականացված վճարումների օրինականության ընտրովի ստուգումներ, դրանց տնտեսական հիմնավորվածության և նպատակահարմարության ստուգումներ, այդ թվում նաև դրանց հաստատումը առաջնային հաշվառման փաստաթղթերով և համապատասխանությունը սույն Քաղաքականությամբ սահմանված պահանջներին:

ԳԼՈՒԽ 9. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԵՏԵՎԵԼՈՒ ԲԱՆԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

22. Բանկի աշխատակիցները պարտավոր են զերծ մնալ կոռուպցիոն գործունեությունից, մասնավորապես՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն, անձամբ կամ երրորդ անձանց միջնորդությամբ կոռուպցիոն գործողություններին մասնակցելուց, առաջարկել կամ ստանալ կաշառք, չարաշահել իրենց լիազորությունները, վարչական կամ այլ բնույթի ֆորմալ պահանջները շրջանցելու նպատակով տալ առևտրային կաշառք, կամ ստանալ դրամ, արժեքներ, այլ գույք կամ գույքային բնույթի ծառայություններ, այլ գույքային իրավունքներ իրենց կամ երրորդ անձանց համար:

23. Բանկի աշխատակիցների մոտ հակակոռուպցիոն պատշաճ գիտակցություն և մշակույթ ձևավորելու նպատակով, Բանկում պարբերաբար իրականացվում է աշխատակիցների առկա և/կամ հեռակա ուսուցում՝ կոռուպցիոն ռիսկերը և դրանց հետևանքները բացատրելու նպատակով:

24. Բանկը իր աշխատակիցներից պահանջում է սույն Քաղաքականության և Էթիկայի կանոնագրքի պահանջների պահպանումը, տեղեկացնելով նրանց վարքի հիմնական սկզբունքների և/կամ ստանդարտների մասին, խախտումների համար պատասխանատվության և պահանջների մասին, ինչպես նաև նրանց հետ աշխատանքային պայմանագիր կնքելիս պարտադիր ստորագրվում է պարտավորություն (համաձայնագիր)՝ վերջիններիս կողմից սույն Քաղաքականության սկզբունքները և պահանջները, ինչպես նաև հակակոռուպցիոն օրենսդրության նորմերը պահպանելու մասին:

25. Սույն Քաղաքականության սկզբունքների և պահանջների պահպանումը աշխատակիցների կողմից հաշվի է առնվում նաև պաշտոնի առաջխաղացման կադրային ռեզերվի ձևավորման դեպքում:
26. Բանկի ցանկացած աշխատակցի մոտ աշխատակիցների, գործընկերների կամ Բանկի հետ համագործակցող այլ երրորդ անձանց գործողությունների/անգործության իրավաչափության կամ էթիկային համապատասխանության մեջ կասկածների առաջացման դեպքում, նա պարտավոր է տեղեկացնել այդ մասին խախտումների Թեժ գծին, համաձայն Բանկի Տնօրինության կողմից հաստատված «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ աշխատակիցների կողմից «Թեժ գիծ» ուղու միջոցով անհամապատասխանությունների և խախտումների վերաբերյալ տեղեկացման մասին կարգի”:

ԳԼՈՒԽ 10. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՉՀԵՏԵՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

27. Բանկի աշխատակիցները՝ անկախ իրենց զբաղեցրած պաշտոնից, պատասխանատվություն են կրում սույն Քաղաքականությամբ սահմանված սկզբունքները և պահանջները չպահպանելու համար:

28. Սույն Քաղաքականության պահանջները խախտած աշխատակիցները Բանկի կողմից կարող են ենթարկվել կարգապահական պատասխանատվության, իսկ կոռուպցիոն իրավախախտումների հայտնաբերման պարագայում (ՀՀ օրենսդրության համապատասխան նորմերի իրավախախտումների համար) Բանկի նախաձեռնությամբ կարող են ենթարկվել քրեական կամ այլ բնույթի պատասխանատվության՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 11. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

29. Սույն Քաղաքականությունը ենթակա է վերանայման ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված ժամկետներում և կարգով:
30. Սույն Քաղաքականությունը կազմվել է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ հայերեն և ռուսերեն տարբերակների միջև հակասությունների առկայության դեպքում գործում է հայերեն տարբերակը: